

մարելու ենք նոյն սովորութեան, զոր բարեբախտաբար Մանդակունին եւս կը յիշէ՝ ըսելով. «Որ զաղքատսն եւ զկարօտեալսն կերակրէ, ... զՔրիստոս կերակրէ, զՔրիստոս զգեցոչցանէ» (61): Այս տեղ զգեցումը քան զկերակրելը կանխելու էր ըստ իրական կարգին՝ որ պահուած է Գղակի եւ Ներսեսի աղքատաց նկարագրին մէջ, որպէս զի պարզեւական զգեստով բազմէին ճաշին ըստ պատշաճի:

Արքունի հացկերութեանց պահուն յարգանաց նշան մ'ալ կոչնականք կ'ընծայէին ծիրանափառ ընթրատունին, կանգնելով ամէն անգամ որ նա հարկադրէր ելնել տաճարէն: Վարազդատայ կոչնոց մէջ երբ արքայն ելաւ՝ «յապարահէ զանց առնելոյ պատճառաւ», այս ինքն է ճեմիշ երթալու համար, բազմականք «յստն կացին առ հասարակ, իբրեւ նմա պատիւ ինչ առնել»¹ (Փաւս, 237): Թերեւս նոյնը չէին ըներ՝ երբ կոչնատէրն իրենց աստիճանակից լինէր:

22. — Լռոչրիւն: — Գրիգոր Տաթեւացին կերակրոց զլիսոյն մէջ այս հարցումը կ'ընէ¹. «Զի՞նչ է որ ի մէճլիսն² յան-

1. Հարցոյ ու պատասխանոց ըստ տպագրին եւ Վե. նետկոյ 1424ի օրինակին է, եւ չկայ 1401ի օրինակին մէջ: — 2. 1424ի օր. «ի մջլիսն»: